

ԿԱԶՄՅԻ ՄԵՋ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿՈՐՈՒՄՏԸ ԿԸ ՄՕՏԵՆԱՅ 73 ՅԱԶԱՐԻ

Կազմյի մէջ իշխող Համառոտ շարժումի կառավարութեան առողջապահութեան նախարարութիւնը յայտարարեց, թէ անցնող 24 ժամերուն հիմն գոգի մահացած է իւրայեւեան յարձակումներուն հետեւանքով, վիրաւորուած են 16 ուրիշներ: Ըստ նախարարութեան, 2023-ի Հոկտեմբերին բռնկած պատերազմին մահացած պաղեստինցիներուն թիւը հասած է 72.996-ի, իսկ վիրաւորներուն թիւը՝ 173.246-ի: Շատեր տակաւին կը մնան փլատակներուն տակ, որովհետեւ փրկարարները չեն կրնար հասնիլ իւրայեւեան յարձակումներուն ենթակայ շրջանները:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԶԱՅՆՈՒԹԻՒՆ

Կը սպասուի, որ Միացեալ Նահանգներու եւ Իրանի բարձրաստիճան ներկայացուցիչները այսօր Չուիցերիոյ մէջ ստորագրեն փոխըմբռնումի յուշագիր մը, որ վերջ պիտի տայ շուրջ 110 օր տեսած պատերազմին եւ բանայ վերջնական համաձայնութեան յանգելու 60-օրեայ բանակցային պատուհան մը: Չուիցերիոյ իշխանութիւնները այս առթիւ պիտի տեղակայեն երկու հազար զինուոր եւ արգիլեն անօդաչու սարքերուն թռիչքը: Միացեալ Նահանգներու փոխնախագահ Ճեյ Տի Վենս յայտնեց, որ Իրանի հետ խաղաղութեան կնքուելիք յուշագիրը տարածաշրջանային խաղաղութեան համաձայնութիւն է, որ կը ներառէ Ծոցի արաբական երկիրները, Իսրայէլն ու Լիբանանը: Թէեւ ամերիկացի նախագահ Տոնըլտ Թրամփ չէտեսց, որ յուշագիրը պիտի չհրապարակուի մինչեւ ստորագրութեան պահը, այդուհանդերձ միջազգային գործակալութիւնները հաղորդեցին, թէ ան բաղկացած է 14 կէտեր, որոնք կը ներառեն Հորնուզի նեղուցի վերաբացում, Թեհրանէն հիւլէական գէներու չտիրանալու եւ Ուաշինկթընէն պատժամիջոցները չեղարկելու յանձնառութիւն, Իրանին պատկանող գումարներու ազատ արձակում, պայմանաւ որ վերջնական համաձայնութիւնը վաւերացուի ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդին կողմէ: Յուշագիրը պիտի անդրադառնայ նաեւ տարածաշրջանի միւս ճակատներուն՝ մասնաւորապէս Լիբանանին, թէեւ այդ առումով կը շրջանառուին հակասական տուեալներ: Իրանի Արտաքին գործերու նախարարութիւնը կը շեշտէ, թէ ամերիկացիներուն հետ յուշագրի ստորագրութեամբ պիտի դադրին նաեւ Լիբանանի դէմ իսրայէլեան յարձակումները, սակայն ամերիկացիները կը խուսափին այդ հարցին ուղղակիօրէն անդրադառնալէ, իսկ Իսրայէլ կը շարունակէ պնդել, թէ պիտի չքաշուին բռնագրաւեալ շրջաններէն եւ պիտի շարունակեն ուժգին հարուածել Հզգապալայի ռազմական գործունէութիւնը:

ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԱՆԿԱՆ ՈՐԻ

Իսրայէլեան լրատուամիջոցներ հաղորդեցին, թէ Լիբանան եւ Իսրայէլ կը մօտենան զինադադարի համաձայնութեան՝ ամերիկեան միջնորդութեամբ: Երէկ հաղորդուեցաւ, որ լիբանանեան-իսրայէլեան բանակցութիւններուն հերթական փուլը Ուաշինկթընի մէջ տեղի պիտի ունենայ 23-25



Յունիսին: Հանրապետութեան նախագահ ժողով Անու Պապատայի պալատ այցելած պատուիրակութիւններուն հետ ունեցած քննարկումներուն մէջ շեշտեց, որ Պէյրութ կը պահանջէ բանակցային անկախ ուղի ունենալ, թէեւ կը զօրակցի տարածաշրջանային բանակցութիւններուն եւ Լիբանանին օգնող որեւէ պետութեան՝ ներառեալ Իրանը:

ԴԵՊԻ ՀԱՐԱՎ

Ամերիկեան-իրանեան յուշագրին շուրջ համաձայնութեան լոյսին տակ, անցնող օրերուն զգալիօրէն հանդարտած է Լիբանանի հարաւային շրջաններուն մէջ տիրող վիճակը, թէեւ իսրայէլեան ուժերը տակաւին կը մնան բազմաթիւ զինուոր մէջ եւ կը շարունակեն հրետանային եւ օդային հարուածները: Հարաւային աւելի ապահով շրջաններուն ուղղութեամբ կը շարունակուի վերադարձող քաղաքացիներուն հոսքը, մինչ լիբանանեան բանակը եւ առնչակից մարմինները կ'աշխատին վերաբանալ ճամբաները եւ վերացնել ռազմական գործողութիւններուն հետեւանքները:

ՎԵՐՋ ԸՆՏՐԱԿԱՆ ԶԲՕՍԱՇՐՋՈՒԹԵԱՆ

Հայաստանի քաղաքացիութիւն կրող սփիւռքահայերը գուցէ այսուհետեւ հնարաւորութիւն չունենան ընտրական զբօսաշրջութիւն կատարելու հայրենիքի մէջ: Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութենէ խումբ մը երեսփոխաններ Ազգային ժողովի շրջանառութեան մէջ որին օրէնքի նախագիծեր, որոնք հիման վրայ կը սահմանուի, որ Հայաստանի համապետական ընտրութիւններուն եւ հանրաքուէներուն կրկնական մասնակցիլ միայն քաղաքացիութիւն ունեցող այն անձերը, որոնք ընտրութիւններուն նախորդած մէկ տարուայ ընթացքին առնուազն 183 օր բնակած են Հայաստանի մէջ: «Ընտրութիւնները պետք է արտացոլեն այն անձերուն կամքը, որոնք իրապէս կը գտնուին այդ պետութեան որոշումներուն ազդեցութեան տակ, ուստի պետք է ապահովել ընտրողին բաւարար կապը պետութեան հետ», նշուած է օրինագիծի հիմնաւորումի մէջ:

ՓՏԱԾՈՒԹԵԱՆ ԴԵՍ ՊԱՅՔԱՐ

Հայաստանի Կեդրոնական ընտրական յանձնաժողովը կը քննէ դիմում մը՝ «Հայաստան» դաշինքի առաջնորդ Ռոպէրթ Զոչարեանի, երեսփոխանական թեկնածուներ Ասատուր Զոչարեանի եւ Ռուսլան Բարսեղեանի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու արտօնութեան առնչութեամբ: Երկրորդ նախագահին գրասենեակը տեղի ունեցածը համարեց ապօրինութիւն, պնդելով որ կառավարութեան կից դատախազութիւնը «գործ մը կարած է եւ դիմած Կեդրոնական ընտրական յանձնաժողովին»:

Նոյն ծիրին մէջ, փտածութեան դէմ պայքարող կոմիտէն յայտնաբերեց ընտրակաշառք տալու եւ ստանալու հերթական պարագաները: Կոմիտէի ծառայողներուն աշխատանքին շնորհիւ կարելի եղած է եզրակացնել, որ «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութեան ներկայացուցիչները Ազգային ժողովի ընտրութիւններուն առթիւ բաժնած են ընտրակաշառք՝ Սպիտակ համայնքին մէջ իրենց օգտին քուէարկելու եւ աջակիցներ հաւաքելու դիմաց: Կոմիտէն ձեռքարկած է շարք մը անձեր եւ բացած է քրեական գործ:

ԵՐՈՒՊԱԿԱՆ ԳՆԱՀԱՏԱՆԸ

Հայաստանի արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեան տեսակցեցաւ Եւրոմիութեան ընդլայնումի հար-



ցերով յանձնակատար Մարթա Զոսի հետ: Եւրոմիութեան անդամ պետութիւններու արտաքին գործերու նախարարներու խորհուրդի նիստի ծիրին մէջ կայացած տեսակցութեան ընթացքին Մարթա Զոս շնորհաւորեց Միրզոյեանը՝ Հայաստանի ընտրութիւններուն յաղթանակին առիթով, շեշտելով որ ընտրութեան արդիւնքը լաւ ուղերձ է

Հայաստան-Եւրոմիութեան գործընկերութեան խորացումին ուղղութեամբ: Միրզոյեան իր կարգին նշեց, որ քաղաքացիներու քուէներուն հիման վրայ այժմ կարելի պիտի ըլլայ յառաջ մղել Երեւանի արտաքին քաղաքական առաջնահերթութիւնները՝ ներառեալ Եւրոմիութեան հետ ռազմավարական գործընկերութեան մշակումը: Կ'ակնկալուի, որ եւրոպացի յանձնակատարը 5 Յունիսին այցելէ Երեւան:

ԱԼԻԵՒԻ ԶԵՏ TRIPP-Ի ՄԱՍԻՆ ԸՆՆԱՐԿՈՒՄ

Ամերիկեան գոնկրեսի Ներկայացուցիչներու պալատէն անդամներ Պաքուի մէջ տեսակցեցան Ատրայէճանի նախագահ Իլիամ Ալիեւին հետ՝ քննարկելու միջպետական յարաբերութիւններու զարգացումը եւ ռազմավարական գործընկերութեան խորացումը: Զրուցակիցները յատուկ անդրադարձած են նաեւ հայ-ատրայէճանական խաղաղութեան հոլովոյթին եւ այդ ծիրին մէջ ամերիկեան դերակատարութեան, ինչպէս նաեւ TRIPP ուղիի հեռանկարներուն: Այսուհանդերձ, ատրայէճանցիները բռնագրաւեալ Արցախի մէջ կը շարունակեն հայկական պատմամշակութային ժառանգութեան կրթականումը: Նորագոյն միջադէպը եղած է Աստղաշէն գիւղին մէջ, ուր քանդած են զոհուած ազատամարտիկներուն յիշատակը յանդիմանող յուշարձանը, որ կանգնեցուած է 2012-ին: Նոյն գիւղին մէջ քանդած են նաեւ 1970-ականներուն կանգնեցուած են Հայրենական մեծ պատերազմի զոհերու յիշատակին նուիրուած յուշակոթողը:

ՊԱՔՈՒԻ ՄԵՋ ԲՈՂՈՔՆԵՐՈՒ ԸՆՆՈՒԹԻՒՆ

Պաքուի Կերպքնիչ դատարանին մէջ 16 Յունիսին շարունակուեցաւ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարութեան՝ Արայիկ Յարութիւնեանի, Արկաղի Ղուկասեանի, Բակո



Սահակեանի, Դաւիթ Իշխանեանի, Դաւիթ Պապայեանի, Լեւոն Մնացականեանի եւ այլոց վերաքննիչ բողոքներուն քննութիւնը, իսկ յաջորդ նիստը պիտի գումարուի 23 Յունիսին: Յիշեցնենք, որ Պաքուի դատարանը վերոյիշեալ անձերը 5 Փետրուար 2026-ին դատապարտած էր ցկեանս բանտարկութեան:

ՀԱՅ-ԱՄԵՐԻԿԵԱՆ ԶԻՆԱՎԱՐԾՈՒԹԻՒՆ

Երեւանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպանութիւնը յայտարարեց, թէ 17 Յունիսին պաշտօնապէս սկսած է հայ-ամերիկեան «Արծի գործընկեր 2026» զինավարժութիւնը, որ պիտի շարունակուի մինչեւ 26 Յունիս: Այս տարուայ աշխատանքներուն կը մասնակցին նաեւ ֆրանսացի եւ յոյն զինուորներ՝ ամրապնդելով համագործակցութեան մակարդակը եւ նպաստելով աւելի հարուստ փորձի փոխանակման:

ՊԵՏԱԿԱՆ ԸՆՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ՝ ԱՆՈՐՈՇ

Վարչապետ Նաուաֆ Սալամ յայտնեց, որ Լիբանան պիտի շարունակէ Իսրայէլի հետ ուղղակի բանակցութիւնները եւ Ուաշինկթընի մէջ ընթացող բանակցութիւններուն միջոցաւ պիտի պահանջէ լիբանանեան բռնագրաւեալ շրջաններէն իսրայէլեան ամբողջական նահանջ: Վարչապետը նաեւ անդրադարձաւ երկրորդականի (Պաքայլուեալ) պետական քննութիւններու



թղթածրարին, որոնք ճակատագիրը պարզելու համար ժողով գումարեց կրթութեան նախարար Ռիմա Զարամիի հետ: Վերջինս խոստացաւ յանգիլ համաձայնական եզրերու՝ յարգելու համար արդարութեան սկզբունքը եւ հարաւի բնակչութեան իւրայատկութիւնները: Շեշտելով թէ՛ ուսումնական մակարդակը, թէ՛ աշակերտներուն անվտանգութիւնը պահպանելու անհրաժեշտութիւնը, Սալամ նշեց, որ իրենք համաձայնած են առայժմ վերջնական որոշում չկայացնել քննութիւնը չեղարկելու մասին, այլ սպասել զինադադարին, որպէսզի ըստ այնմ ծրագրէն յաջորդ քայլերը: Առայժմ որոշուած է ուշացնել 1 Յունիսին նախատեսուած քննութիւնները, որպէսզի հնարաւորութիւն տրուի վերջնական որոշումի:

ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԸՆԶԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ

ՀՆԶԱԿԵԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻ ՕՐ

ԽՕՍԸ Կ'ԱՌՆԵՆ՝

ԸՆԿԵՐ ԱԼԵՔՍԱՆ ԲԵՕԵԿԵՐԵԱՆ (Ս.Դ.Հ.Կ. ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՍ)

ԸՆԿԵՐ ՎԱՆԻԿ ՏԱԳԵՍԵԱՆ (Ս.Դ.Հ.Կ. ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆԻ ԱՏԵՆԱՊԵՏ)


Ուրբաթ, 19 Յունիս 2026-ի երեկոյեան ժամը 7:30-ին, Սիւն Էլ Ֆիլի քաղաքապետարանի սրահին մէջ:

Փոխադրակառքերը ապահովուած են Նոր Հաճնոյ Ս. Գեորգ եկեղեցւոյ, Ռոմէյլի Ս. Յարութիւն եկեղեցւոյ, Ը.Ս.Ս.-Պէյրութի, Ը.Ս.Ս.-Մասիսի, Ը.Ս.Ս.-Ռաուտայի, Ը.Ս.Ս.-Անթիլիասի ակումբներուն առջեւէն, երեկոյեան ժամը 6:30-ին:

ԻՏԱԿԻՎ ՀԻՆ ԲՆԿԵՐ ՄԸ...

«Անցեալը հեռու չի թուիր, կը քալէ ներկային զուգընթաց»:

Այս նկարը ստեղծած է Լեոնարդո տա Վինչին շուրջ 1490 թուականին, եւ կ'արտացոլէ հին հռոմէացի ճարտարապետ-ճարտարագետ Վիթրուվիոսի գաղափարները:



Մեծ արուեստագետը այր մարդու մարմինը պատկերած է երկու իրարու համապատասխանող դիրքերով՝ ձեռքերը-ոտքերը բաց, ներառուած շրջանակի եւ քառանկյունի մէջ:

Վեթրուվիոս կը հաւատար, որ մարդու մարմինն համամասնութիւնները կ'արտացոլէ բնութեան մաթեմատիկական ներդաշնակութիւնը, իսկ տա Վինչի այս նկարով ուշադրութեան կ'արժանացնէ քանի մը գաղափար:

Ա) Մարդու մարմինը որպէս կատարելութեան չափանիշ:

Բ) Մարդու եւ տիեզերքի կապը: (Շրջանակը յաճախ դիտուած է որպէս երկնիքի եւ կատարելութեան խորհրդանշան, մինչ քառանկյունը կը ներկայացնէ երկրային աշխարհը):

Գ) Արուեստի եւ գիտութեան միութիւնը (նկարը կը համատեղէ մարդակազմութիւն, երկրաչափութիւն, մաթեմատիք եւ... գեղեցկութիւն):

Դ) Նաեւ Վերածնունդի դարաշրջանի մարդկայնութիւնը, սակայն այն համոզումով, որ մարդը կեդրոնական տեղ կը գրաւէ արարչագործութեան մէջ, եւ կ'օգնէ հասկնալու աշխարհը:

Շանթանանք նկարի որոշ մանրամասներուն. Պորտը կը ծառայէ որպէս շրջանակի կեդրոն: Սեռային օրկանները՝ քառանկյունի կեդրոն: Պարզուած ձեռքերուն բացուածքը մօտաւորապէս հաւասար է մարմնի հասակին: Տա Վինչի նկարին շուրջ գրաւոր նշումներ ըրած է, յստակացնելով համամասնութիւններուն իմաստը:

Շատեր կը կարծեն, թէ «Վիթրուվացի մարդը» մարդակազմութեան ուսումնասիրութիւն է, բայց իրականութեան մէջ տեսողական արտայայտութիւնն է Վերածնունդի իտալիան: Այն, որ մարդը կամուրջ է երկրային եւ տիեզերական կարգի միջեւ, եւ այն, որ գեղեցկութիւնը կարելի է ընկալել բանականութեան եւ մաթեմատիքի միջոցաւ:

Նկարին բնօրինակը կը գտնուի Վենետիկի ակադեմիայի պատկերասրահին մէջ, բայց թուրքը շատ նուրբ ըլլալուն՝ հազուադէպ կը ցուցադրուի:

Լեոնարդոյի մեծ նուաճումներէն մէկը եղաւ ձեռքերու եւ ոտքերու տարբեր դիրքերու դասաւորմամբ բացայայտել մարդու մարմնի երկու ձեռքերուն տեղաւորումը: Իրմէ առաջ շատ մը նկարիչներ չեն յաջողած լուծել այս երկրաչափական խնդիրը: Լեոնարդոն լուծումը այնքան նուրբ էր, որ նկարը դարձաւ Վիթրուվիոսի գաղափարներուն վերջնական պատկերագրումը:

Վերածնունդի նկարիչները միշտ փնտռեցին մաթեմատիքի եւ գեղեցկութեան ներդաշնակութիւնը: Վիթրուվացի մարդը կարելի է սեպել այդ դարաշրջանի իրովարտակը՝ տիեզերքը կարգաւորուած է, եւ մարդը կ'արտացոլէ այդ կարգը:

Սակայն Իտալիոյ պատմութիւնը ճիշդ չէ փնտռել միայն թանգարաններուն մէջ: Այդ պատմութիւնը ազուցուած է առօրեայ կեանքին: Գաւաթ մը սուրճ խմելու կամ պաղպաղակի (gelato) վայելելու նպատակով կը քալէս սալայատան փողոցներէն, կ'անցնին տաճարի մը ընդմէջ, որ աւելի հին է քան շատ մը ազգեր, անկին մը կը դառնաս՝ դիմացդ պայտ մը կը յայտնուի, որ կառուցուած է երբ դեռ ասպետներ կը ձիակարէին... Գողտրիկ մատուց մը կը յայտնաբերես եւ կը հիանաս Վերածնունդի վարպետներէն մէկուն գլուխգործոցով... Եւ այսպէս՝ անընդմէջ:

Վերածնունդի դարաշրջանի օրրան Ֆլորանսի մէջ անցեալը հեռու չի թուիր, կը քալէ ներկային զուգընթաց: Այս զգացողութեան ամենէն ազդեցիկ խորհրդանշանը, անշուշտ, Սանթա Մարիա տէլ Ֆիորեի հսկայ տաճարն է, որուն կարմիր աղիւսէ գմբէթը դարերէ ի վեր կ'իշխէ քաղաքի համայնապատկերին վրայ եւ մինչ օրս կ'ընկալուի որպէս մարդկային միտքի խոյանքի խորհրդանշան:

Տաճարի գմբէթի կառուցման ընթացքին ոչ ոք կը պատկերացնէր, թէ ինչպէս կարելի պիտի ըլլար հսկայական տարածութիւն մը ծածկել առանց փայտէ յենարաններու: Ֆիլիպո Պրուենտեթի, սակայն, գտաւ լուծումը եւ ստեղծեց իր ժամանակի ճարտարագիտական հրաշքներէն մէկը: Շատեր կը հաստատեն, որ Ֆլորանսի մայր տաճարին գմբէթը Վերածնունդի մեծ յաղթանակներէն է. այն պահը, երբ մարդը կրկին վստահեցաւ իր բանականութեան ու ստեղծագործ ուժին:



Տաճար մտնելէ ետք դժուար չէ հասկնալ, թէ ինչու Վերածնունդի տիտանները այդքան մեծ վստահութիւն ունեին մարդկային կարողութիւններուն նկատմամբ: Այդ գմբէթին տակ մարդը կը զգայ իր փոքրութիւնը եւ... մեծութիւնը միաժամանակ: Փոքրութիւն՝ կողոպտիկ կառուցողի դիմաց, մեծութիւն՝ քանի որ այդ հրաշքը ստեղծուած է մարդու հանճարով ու ձեռքով: Այդ է պատճառը, որ Ֆլորանսի մայր տաճարը ոչ միայն եկեղեցի, այլ նաեւ մարդկային արարչագործ ոգիի յուշարձան է:

Այդ քաղաքին քարերը, փողոցները, գակերը, հրապարակները, բոլոր-բոլորը կարծես զիրեք ստեղծած մարդոց յիշողութիւնը կը կրեն:

Կարելի է կրկին ու կրկին այցելել այս քաղաքը եւ ամեն անգամ նոր բացայայտումներ ընել: Անկարելի է մէկ այցով խորութեամբ ընկալել ամեն բան: Առաջին այցին գլուխգործ



Տաճարի գմբէթի կառուցման ընթացքին ոչ ոք կը պատկերացնէր, թէ ինչպէս կարելի պիտի ըլլար հսկայական տարածութիւն մը ծածկել առանց փայտէ յենարաններու: Ֆիլիպո Պրուենտեթի, սակայն, գտաւ լուծումը եւ ստեղծեց իր ժամանակի ճարտարագիտական հրաշքներէն մէկը: Շատեր կը հաստատեն, որ Ֆլորանսի մայր տաճարին գմբէթը Վերածնունդի մեծ յաղթանակներէն է. այն պահը, երբ մարդը կրկին վստահեցաւ իր բանականութեան ու ստեղծագործ ուժին:

Տաճարի գմբէթի կառուցման ընթացքին ոչ ոք կը պատկերացնէր, թէ ինչպէս կարելի պիտի ըլլար հսկայական տարածութիւն մը ծածկել առանց փայտէ յենարաններու: Ֆիլիպո Պրուենտեթի, սակայն, գտաւ լուծումը եւ ստեղծեց իր ժամանակի ճարտարագիտական հրաշքներէն մէկը: Շատեր կը հաստատեն, որ Ֆլորանսի մայր տաճարին գմբէթը Վերածնունդի մեծ յաղթանակներէն է. այն պահը, երբ մարդը կրկին վստահեցաւ իր բանականութեան ու ստեղծագործ ուժին:

Տաճարի գմբէթի կառուցման ընթացքին ոչ ոք կը պատկերացնէր, թէ ինչպէս կարելի պիտի ըլլար հսկայական տարածութիւն մը ծածկել առանց փայտէ յենարաններու: Ֆիլիպո Պրուենտեթի, սակայն, գտաւ լուծումը եւ ստեղծեց իր ժամանակի ճարտարագիտական հրաշքներէն մէկը: Շատեր կը հաստատեն, որ Ֆլորանսի մայր տաճարին գմբէթը Վերածնունդի մեծ յաղթանակներէն է. այն պահը, երբ մարդը կրկին վստահեցաւ իր բանականութեան ու ստեղծագործ ուժին:

ԱՆԻ ԹՈՐԱՆԵԱՆ (ԵՐԵԱՆ)

Յոյներու առատութիւնը գլխապայտոյ կը պատճառէ, չես իսկ հասնիր տեսածդ դրոշմէլ մտքիդ մէջ: Երկրորդին՝ պատրաստ կ'ըլլաս ոչ միայն ազախօրէն դիտելու, այլեւ պատմութեան հետքերով կը հասնիս տուեալ նկարը, քանդակը, գմբէթը կամ ուրուանկարը ստեղծած արուեստագետին, կը ճանչնաս անոր անցած ճամբան, մտածողութիւնը, վարպետութիւնն ու կը հիանաս անոր քանքարով: Մէկ խօսքով, տեսողականէն անցում կը կատարես դէպի իմացականը: Յայտնագործութիւնները անվերջ են:

Սակայն Ֆլորանսի հմայքը ամբողջականօրէն վայելելու համար բաւարար չէ մնալ անոր 102 ըմ2 տարածքին վրայ (Երեւանի կէսին չափ): Անոր շուրջ տարածուած են քանի մը միջնադարեան քաղաքներ, որոնք ժամանակի մէջ կանգ առած են կարծես:

Սիւնայի նեղիկ փողոցները եւ աղիւսէ պալատները կը յիշեցնեն այն դարերը, երբ իտալական քաղաք-պետութիւնները հարստութեան եւ ազդեցութեան մրցակազմի մէջ էին իրարու հետ: Սան Ճիմինիանոյի աշտարակները, որոնք հեռուէն իսկ կը նշմարուին թուրքական բլուրներուն վրայ, իրենց այցելուին առջեւ միջնադարեան աշխարհի հազուագիւտ պատկեր մը կը բանան:

Այլ է Պոլոնիան իր երկար կամարաշարերով, կարմրաուռ շէնքերով եւ դարաւոր համալսարանով (Եւրոպայի եւ աշխարհի ամենէն հին եւ անընդմէջ գործող համալսարանն է): Բայց Իտալիոյ մեծութիւնը պէտք չէ փնտռել միայն արուեստի ու ճարտարապետութեան մէջ, այլեւ գիտութեան, ուսման եւ գաղափարներու ազատ փոխանակման աւանդութեան: Պոլոնիոյ համալսարանը կը գործէ ԺԱ. դարէն ի վեր եւ գիտելիքի ու միտքի մեծ կեդրոն է:

Այդ գողտրիկ քաղաքներուն նեղ փողոցներէն կը քալէ ժամանակակից աշխարհէն կտրուած, իսկ անցեալը ամէն քայլափոխի քեզի կը նայի քարէն, աղիւսէն կամ զանգակատուներու բարձուքէն:

Իտալիան բացայայտումներու երկիր է եւ ամէն վայրկեան կը յուշէ, որ կեցած են դարեր առաջ ապրած հզօր անհատականութիւններու՝ արուեստագետներու, կառավարիչներու, վաճառականներու, նաեւ սովորական մարդոց ոտնաձեռքերուն վրայ... Լաւը ճամբորդութեան երկրորդ մասն է՝ յետադարձ հայեացքն ու խորհրդածութիւնները: Շատ անգամ ամենէն հետաքրքրական յայտնագործութիւնները կը կատարուին տունդարձէ ետք, երբ տարբեր վայրերու մասին նոր մանրամասներ կը բացայայտես:

Գուցէ Վերածնունդի վարպետները այլեւ դադրած են բան սորվեցնելէ աշխարհին, գուցէ... բայց կարծես դեռ քանի մը դաս վերապահած են հետաքրքրասէր ուղեւորներու համար:

Այդ ժամանակաշրջանի նշանաւոր դէմքերուն մեծ մասը կը հաւատար, որ մարդը ընդունակ է արտատվոր նուաճումներու: Լեոնարդոյի, Միքելանճելոյի եւ Ռաֆայելի պէս սկսանքներուն համար արուեստը եղաւ ճշմարտութեան, գեղեցկութեան եւ աստուածայինի մօտենալու միջոց:

Ֆլորանսի տաճարի գմբէթին տակ, Միքելանճելոյի քանդակին կամ Լեոնարդոյի նկարներէն մէկուն կողքին կարելի չէ չհիանալ մարդկային միտքի վճռականութեամբ, երեւակայութեամբ ու հմտութեամբ: Գաւաթաբար այդ է պատճառը, որ անոնց գործերը դարեր ետք ալ կը շարունակեն յուզել մեզ եւ կը յիշեցնեն, որ մարդկային արարչական միտքը ի վիճակի է վեր կանգնելու իր դարաշրջանէն: Մարմարը, ներկը, քարը կը մասն, բայց իրականութեան մէջ գոյատեւողը գաւաթը ստեղծած ոգին է:

Իտալիա այցելող իւրաքանչիւր ոք պէտք է գիտակցի, որ Վերածնունդը ոչ միայն պատմական ժամանակաշրջան, այլեւ գրոյց է այն մասին, թէ ինչի ընդունակ է մարդը: Այդ գրոյցը անվերջ է:

Վենետիկ... Անիրական քաղաք: Եթէ Ֆլորանսը բնորոշեցնէր որպէս մարդկային միտքի եւ գեղարուեստական հանճարի յաղթանակ, իսկ Վենետիկը... երազ է: Ապշիլ կարելի է, թէ մարդը ինչպէ՛ս մտածեր է ծովալիճի մը վրայ քաղաք կառուցել ու գալիս լեցնել պալատներով, եկեղեցիներով, կամուրջներով ու արուեստի գործերով...:

Երկար դարեր Վենետիկը կանգնած եղած է արեւելքի եւ արեւմուտքի միջեւ՝ ի մի բերելով Կոստանդնուպոլսոյ, իրաւական աշխարհի եւ Արեւմտեան Եւրոպայի ազդեցութիւնները: Ահա թէ ինչու անոր ճարտարապետութիւնը տարբեր է Ֆլորանթականէն:


Վենետիկը կը կրէ ո՛չ միայն Վերածնունդի, ո՛չ միայն գոթական, ո՛չ միայն բիզանդական ոճերը, այլեւ եզակիօրէն վենետիկեան է:

Ան գեղեցիկ ու փխրուն է առասպելական ջրահարսի մը պէս, որ կը շլացնէ իր այցելուները, եւ կը յուշէ, որ իր դարազնայ կեանքը կը պարտի ջուրի եւ ցամաքի համերաշխ հաւասարակշռութեան:

Այսպիսի ճամբորդութիւնները մեր միտքին մէջ կը մնան ոչ միայն թանգարաններով ու յուշարձաններով, այլեւ աննշան թուացող նուրբ պահերով՝ ջուրերուն վրայ վերջալոյսի հետքով, խաղաղ նրբանցներով, հին սալաքարերուն վրայ քայլերու ձայնով, նեղ փողոցի մը ծայրը անակնկալ յայտնուած ցուցափեղկի մը հրաւերով...:

Մեզի հետ երկար ճամբայ կտրող յիշողութիւններ են ասոնք:

Ֆլորանսը մեզի հետ կը խօսի արուեստի, պատմութեան եւ Վերածնունդի հանճարին միջոցով, մինչ Վենետիկը կը հմայէ իր հարուստ պատմութեամբ, քաղաքը հատող 150 ջրանցքներով, հնգագմբէթ «Ոսկէ տաճարով» (Նափուլտոն այսպէս կոչած է Սուրբ Մարկոս եկեղեցին) ինքիաբան ճարտարապետութեամբ ու անկրկնելի մթնոլորտով:




Ֆլորանսը մեզի հետ կը խօսի արուեստի, պատմութեան եւ Վերածնունդի հանճարին միջոցով, մինչ Վենետիկը կը հմայէ իր հարուստ պատմութեամբ, քաղաքը հատող 150 ջրանցքներով, հնգագմբէթ «Ոսկէ տաճարով» (Նափուլտոն այսպէս կոչած է Սուրբ Մարկոս եկեղեցին) ինքիաբան ճարտարապետութեամբ ու անկրկնելի մթնոլորտով:

ԱՆԵՔԱՆԴԻ ԹՓՓՅԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՎԱԻԵՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՌՈՒԲԵՆ ՍԵՒԱԿԻ ՄԱՍԻՆ (ՄԱՍ Բ.)

ՅԱՐԻԹԻՒՆ ԻՍԿԱՅԱՏԵԱՆ

Ռուբեն Սեւակ կ'ամուսնանայ Եաննիկի հետ: Կ'ունենան մանչ գաւազ մը եւ դուստր մը, որ Լեւոն եւ Շամիրամ կ'անուանեն: Ան կ'աւարտէ բժշկական ուսումը եւ ընտանեօք Կ. Պոլիս կը վերդառնան, ուր հիւանդանոցի մը մէջ կը սկսի աշխատիլ:

Ա. Համաշխարհային պատերազմը կը պայթի: Օր մը երկու զինուոր-ստիակներ Ռուբենի տունը կու գան իբրեւ թէ գայն Բերա հիւանդի մը տեսութեան տանելու: Սակայն փոխարէն ան նեղաբար բանակ կը տարուի իբրեւ սպայ-բժիշկ: Եաննիկ լսած ըլլալով քաղաքին մէջ հայոց ձերբակալ



ութիւններուն մասին, գիշերը մտատանջութեան կը մատուցի: Հիլմի փաշա, գոր Ռուբեն բուժած էր եւ մահէն ազատած Լօզանի մէջ, կը փորձէ ազատել գայն: Եաննիկ Հիլմիի հետ գործակցաբար կը դիմէ գերմանացի զինուորականներու, որոնք վստահաբար կրնային ազատել Ռուբեն Սեւակը: Այնպէս էր, որ այդ օրերուն գերմանական դեսպանատունը Պոլսոյ թրքական դէպքաւարութեան տէրն ու տիրականն էր: Եաննիկ գերմանացի զինուորական Կոստանդին Ֆոն Նոյրայիս կը դիմէ:

Գաւառներէն եկող լուրերը հայոց կոտորածները կը զուժեղնէ: Ռուբեն Սեւակ, որ այժմ օսմանեան բանակին կը ծառայէր, արձակուրդով տուն կու գայ: Դանիէլ Վարուժան կ'ացնէ անոր ու երկու բանաստեղծները կը գրուցեն գրական, ազգային եւ այլ նիւթերու շուրջ: Ռուբեն ապա կը վերդառնայ բանակ՝ իր պաշտօնին:

Նոյրաթ կը յաջողի ապահովել աւելի բարձր պաշտօնով այլ գերմանացի զինուորական՝ Եոհաննի միջնորդութիւնը: Եոհան Եաննիկի հօրեղբայրն էր: Անոք միասին կը մտադրեն Ռուբենը ընտանեօք Գերմանիա փոխադրել, բանակէն ազատուելու պարագային: Ռուբեն Սեւակի կինը՝ Եաննիկ այս միջոցին գերմանացի զինուորականներու հետ ջանք չի ինկայր ամուսինը ազատելու:

Թուրքերը Ռուբեն Սեւակը շոգեկառնող էնկիրի (Ալքարա) կը տանին: Ան ճամբուն վրայ հայապատկան քանդուած տուններ կը նշմարէ: Բանակի հրամանատարը Ալքարայի մէջ Սեւակը ռազմական դատարան կը տանի, ուր գինք աքտրելու վճիռ կը տրուի, որուն ճամբուն վրայ անոնք կ'անցնին Գալեօնի կղզուած գիւղէն, ուրկէ շուտով գետին եզերքը կը տանին: Հոն Ռուբեն Սեւակ կը հանդիպի քեռի մը հայ մտաւորականներու: Ապա թուրքերը գաւառը Չանղըրը կ'աքտրեն, ուր անոնք կ'առաջարկուի իսլամանալ եւ թրքանալ: Հայ մտաւորականներէն ոչ մէկը կը համաձայնի: Մտաւորականներու կեցած տեղէն քիչ անդին ահմելի բաներ կը պատահին՝ ծեծ, խոշտանգում եւ կոտորած: Չանղըրը 700 աքտրուած հայ ընտրեալներէն ողջ կը մնան միայն 70-ը, որոնք դէպի շրջակայ կիրճերն ու ձորերը կը քշուին:

Ռուբեն Սեւակը շոգեկառնող իրար ըմ կը հաւաքուին ու կը գրուցեն: Անոնք մէջ կ'ըլլան Դանիէլ Վարուժան, Բիզանդ Զէյնան, Տիրան Զէյնկեան, Կոմիտաս Վարդապետ, Ռուբեն Սեւակ եւ ուրիշներ: Այս միջոցին Պոլսոյ մէջ Եաննիկ կ'այցելէ գերմանական դեսպանատուն եւ խօսակցութեան մէջ կ'ըսէ թէ հայոց կեանքը դժոխքի վերածուած է:

Չանղըրը քաղաքի տէրն ու տիրականը Արապաճիպաշը (Կառապանապետ) Իսմայիլն էր: Անոր դուստրը եօթը գաւազ ուներ, որոնցմէ մէկը՝ Այշեն հիւանդ էր: Ռուբեն Սեւակ կը բուժէ այդ աղջիկը: Այս բարեբաստիկ առիթով Ռուբեն Իսմայիլի արտօնութիւն կ'առնէ նահանգապետը տեսնելու: Ան նահանգապետէն կ'իմանայ, թէ Թալաթա իրաման արձակած է հաշուէլ Չանղըրը հայերը եւ շուտով գաւառը ճամբար հանել դէպի Այաշ: Այդ օրհասական օրերուն հայ մտաւորականները կրկին կը հաւաքուին եւ կը խորհրդակցին: Անոնք միաձայնաբար կը մերժեն իսլամանալ եւ թրքանալ, այլ պայքարիլ մինչեւ մահ:

Որոշուած էր Ռուբեն Սեւակը, Դանիէլ Վարուժանը, Օննիկ Մաղազաճեանը, Վահան Զեհեայեանը եւ հացագործ Յարութիւնեանը Այաշ ուղարկել: Ձեռնաշղթաներով աքտրականներուն թուրք ոստիկաններ կ'ուղեկցին: Ճամբուն վրայ տալը պաշտպանութեան արագակներ անոնք ընթացքը կը կասեցնեն եւ ինչ կ'աքտրեալներ կը սպաննեն: Ռուբեն Սեւակ եւս գոհ կ'երթայ նեղ թուրքերու ոճրային արարքին: Հեղինակը՝ Ալեքսանդր Թօփճեան այդ պահը հետեւեալ ձեւով կը նկարագրէ. «Տըքոցները շարունակուում են: Հայեացքը մի փրկութիւն ունի լոկ. երկինքը անսահման կապոյտ... Գլուխը յետ գցեց, որպէսզի միայն երկինքը տեսնի, ուսերը ցնցեց, ձեռքերը փորձեց ազատել կոշտ պարանկի կապանքերից... Բանի տեղ չդրեց... Այդ պահին մի սուր ծակոց զգաց այնտեղ, ուր սիրտն է... Սրտի ծակոց վաղուց ունէր... Չափք նաեւ թէ ինչպէս կապանքներից ազատուած սլանում է երկինք... Եւ այդ ծակոցն անսպասելի

ՀԻՊՆՈՏԻԿ ԱՐՈՒԵՍՏԻ ՔՐՄԱՊԵՏՈ

«Մի քիչ սիրով նայեք նկարներին, եւ նրանք կը խօսեն ձեզ հետ»
Յրանտ ԹԱՂԵՐՈՍԵԱՆ
ՀՀ ժողովրդական նկարիչ

Ս. ԳԵՈՐԳԵԱՆ

հոգու ամենանուրբ գոյներով, ճշմարիտ հաւատքի և սիրու-
կան ծաղկունքով: Ծաղկած եկեղեցիների շարքը անվերջա-
նալի է, քանզի վարպետն ստեղծագործում է ամեն օր, ամեն
ժամ:

Յայրենի բնաշխարհն իր վրձնով յաւերժացրած գեղա-
նկարիչը հայ մշակույթի գանձարանը հարստացրել է արուես-
տի արժեքաւոր գոհարներով: Վարպետի իւրաքանչիւր
բնապատկերում Յայաստան աշխարհի արբեցնող բոյուն է:

Վարպետի կախարդական վրձնահարուածից արթնա-
ցած խաշխաշները, հիւսելով քնքուշ մեղեդի, սփռում են
գունեղ տեսիլքներ: Հիպնոտիկ ազդեցութեամբ գերում եւ
բժշկում հոգիներ:



Յայ գեղանկարչութեան մէջ եզակի նմուշ կարող ենք
համարել Յրանտ Թաղաթոսի սպիտակ ցուլը՝ «Դադար»: Գլխա-
ւոր մեղեդին կանգ առած ակնթարթն է: Երբ երաժշտութիւնը
դադարել է, բայց օդում սաւառնում են հնչիւնները: Կտաւում
մենակատարը ճերմակ ցուլն է՝ յստակ, մաքուր, առիւթնոց:
Սա երաժշտա-խոհափիլիսոփայական առասպելական
կտաւ է, որտեղ խորհուրդը սպասողական լռութիւնն է:
Արուեստագետի մտահորիզոնը հատելով ժամանակի սահ-
մանը, փիլիսոփայօրէն իմաստաւորած ընտրել է իր հոգուն
ներդաշնակ գունաֆոն: Ծերմակ ցուլն իր հետեւում թողնում
է մութն ու խաւարը՝ մութ դարչնագոյնից անցնելով
կարմիրով, ուղեւիշը՝ դեպի արեւի ոսկեղեղինը: Խորհրդաւոր
այս կենդանուց լոյս է ցոլում: Պերճաշուք կեցուածքով ցուլը,
հզօր, բայց հանգիստ, հաստատուն ու անդրդուելի քայլ է
անում դեպի տրի սկիզբ, դեպի յարթանակ:

Յրանտ Թաղաթոսի «Վարպետի հետեւում» կտաւը գայ-
թակողութեան բարձրակետ է: Ստեղծագործ մտաւորական
արարել է շնչահեղձութեան հասնող զգացմունք: Հիւթեղ
կարմիրում կնոջ շքեղութիւնն ու առաքինութիւնն է՝
զուգորդուած այնպիսի խոնարհ կերպարանքով, որ լցում-
լիանում են այրող ու մաքուր բոցով: Վարպետից այն կողմ
պատկերուած է կանացի ողջ հմայքը, գաղտնի, խորհրդաւոր
եղութեամբ: Սիրոյ, կրքի բոցավառուող կարմիրից, ակամայից
Ա. Իսահակեանի տողերն են գալիս. «Եկեք ստեղծենք
Աղամի համար մի քնքուշ ընկեր, որ մարդը միայնակ չկայելէ
դրախտի հրապոյրները»:

... Եւ Աստուած բռնեց դեպի վեր սուրացող կրակն ու նրա
բէկբէկուն, ճախրուն բոցերից ստեղծեց անդրանիկ կնոջը՝
Լիլիթին:
Եւ նայելով իր ստեղծածին՝ հիացած ասաց.
«Բարի է, որովհետեւ գեղեցիկ է»:

Անուանի նկարչի հետ շփումը մեծագոյն պատիւ է: Նա
մարդկային բարձր արժանիքներով օժտուած իմաստուն
մտաւորական է: Իւրաքանչիւր բառը, խօսքը, անգամ
վարուելածէն մշակույթ է՝ բնորոշ ազնուագոյն արուեստա-
գետին: Նշանակալի է իր սիրելի ու գեղեցկուհի տիկնոջ դերը
վարպետի կենսութեամբ: Տիկին Սիլվան, հայ կնոջը յատուկ
հեզուութեամբ, ջերմութեամբ, հոգատարութեամբ, մեծ սիրով
ոգեշնչում է Յրանտ Թաղաթոս մեծութեանը: Գեղանկարչի
աչքերին նայելով՝ սուզում ես մինչեւ հոգու անյատակ
խորքը, որտեղից բարութիւնն ու ջերմութիւնն է յորդում:
Ծայրայեղ նրբանկատ ու վեհանձն է գոյների մայրեթոս:
Երջանկութիւնն է լինել նրա ժամանակակիցը, բարեբախտու-
թիւն՝ անձնապէս ճանաչելը:



Երեւելի արուեստագետը շրջանաւարտն է Խաչատուր
Աբովեանի անուան ՀՊՄՀ գեղագիտութեան բաժանմունքի:
Նա երկար տարիներ մասկավարժական անխոնջ գործու-
նեութիւն է ծաւալում՝ դասաւանդելով ճարտարապետու-
թեան եւ շինարարութեան Յայաստանի ազգային
համալսարանում: Փրոֆեսորը, կրթելով սերունդներ, իր
փորձն ու գիտելիքներն անվերապահօրէն ու անմնացորդ
փոխանցում է ուսանողներին:

Երփնակարչի ոճն ու ձեռագիրն անմասն է, տարբերուող
ու շեշտող: Նա ունի գոյնի եւ պատկերի նրբաճաշակ,
էսթետիկ ընկալում, մկրտուած է բացառիկ լոյսով: Վարպե-
տին յատուկ է գեղարուեստափիլիսոփայական խորը,
ինքնատիպ մտածողութիւն, գոյների համահաւաք, ներդաշ-
նակ տարածութիւն: Յրանտ Թաղաթոսն տրուած է մարդկային
շնորհներից ազնուագոյնը՝ ստեղծագործելու, արարելու
շնորհը: Նա իր անսպառ ներուժով այն հասցրել է կատա-
րելութեան, խոնարհութեամբ ծառայել ի նպաստ հայրենի-
քին ու իր ժողովրդին: Վերջին տասնամեակներում հայ
մշակույթի երկնակամարում Յրանտ Թաղաթոս անունը փայլա-
տակում է վառ լոյսով՝ ջերմացնելով հայրենակիցների ու
արուեստի երկրպագուների սրտերը:

Գեղանկարչի անհատական ցուցահանդէսները փայլուն
կերպով կայացել են Յայաստանի, Արժանթինի, Ֆրանսայի,
ԱՄՆ-ի, Գերմանիայի, Չուվիցերիայի մի շարք քաղաքներում:
Աշխարհի տարբեր երկրների մասնաւոր հաւաքածոներում
սփռուած վարպետի կտաւները պատմում են ու խորհրդա-
նշում հային: Որտեղ կայ գոյների մայրեթոսի վրձնա-
հարուածը, այնտեղ տիրում է գերբնական խաղաղութիւն,
սէր, լոյսով լցուած ջերմ մթնոլորտ:



Վեց հազարից անէլի կտաւների շարքում մի առանձնա-
յատուկ նշանակութիւն ունեն հայկական ու համաշխար-
հային կրթողները, քրիստոնէական տաճարները,
սրբավայրերը, միջնադարեան հոգեւորկրթական համալիր-
ները, որոնք նա յաւերժացրել է իր մոգական վրձնով: Սրանք
պատմական Յայաստանի, հայ ազգի անդուլ հաւատի,
կրօնի խօսուն ու լուռ վկայներն են: Ցառկանշաղկապ են Անիի
սուրբ Աստուածածին կաթողիկէ եկեղեցին, որը դասում է
հայ ու համաշխարհային ճարտարապետական նմուշի
շարքին, Օծունի սուրբ Աստուածածին գմբէթաւոր բազիլիկ
եկեղեցին, որը վաղ միջնադարեան եզակի կառոյցներից է՝
յաւերժացած Վարպետի կտաւներում: Նաեւ սուրբ Կարա-
պետ վանական համալիրն իր գօրութեամբ: Մռաւ սարի լան-
ջին բազմաձայն պատմական Արցախի Դաղիվանք վանական
համալիրը: Դրանք նա պատկերել է իր վրձնի գոյներով,
յատուկ վեհութեամբ ու անսահման հաւատով: Արագած
լեռան լանջին՝ Ամբերդ ամրոցի տարածքում, թաղէտեսե-
ական վառ գունապնակով արարուել է «Առաւօտ լուսոյ»
կտաւը՝ վեհաշուք սուրբ Աստուածածինը: Անձեռակերտ
կտաւ է «խոնարհուած եկեղեցին»՝ արարուած վարպետի

ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ (ԱՔԵՂԱՅԱԿԱՆ) ՁԵՌՆԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՕԾՈՒՄ ՄԱՅՐԱՎԱՆ-ՔԻՆ ՄԷՋ

Նախագահութեամբ եւ օրհնութեամբ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՐԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Շաբաթ, 20 Եւ Կիրակի, 21 Յունիս 2026-ին, Մայրա-
վանքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ
պիտի կատարուի քահանայական (աքեղայական) կոչ-
ման արարողութիւն եւ ձեռնադրութիւն ու օծում:

Ձեռնադրիչ եւ քարոզիչ
ԳԵՐՇ. Տ. ԿՈՄԻՏՏԱՍ ԱՐԵ. ՕՅԱՆԵԱՆ
(Կաթողիկոսական փոխանորդ Կիպրոսի Յայոց թեմին)

Քահանայ (աքեղայ) պիտի օծուին Դպրեվանքի
աշակերտներէն՝
ԲԱՐՇ. ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍՐԿ. ՊԱՅՏՈՒՆԵԱՆ
ԲԱՐՇ. ԱՐԲԱՍՄ ՍՐԿ. ՊԱՅՏՈՒՆԵԱՆ

Կոչման արարողութիւնը տեղի պիտի ունենայ Շա-
բաթ, 20 Յունիսի երեկոյեան ժամը 6:00-ին, իսկ օծումը՝
Կիրակի, 21 Յունիսի առաւօտեան ժամը 9:30-ին:
Աղօթակից ըլլանք նորընծայ հայր սուրբերուն, որպէս-
զի իրենց կոչումին մէջ հաստատ մնան եւ պտղաբեր
դառնան իրենց ծառայական կեանքին մէջ:

ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

ԱՄՈՒՍՆԱՅԵԱԼՔ

**Ընկեր Լուսֆիկ Կօտալազեան
ընդ
Ընկերուհի Մարի-Անն Յովհաննէսեան**

06-06-2026
Ռըմէյի Ս. Յարութիւն եկեղեցի - Պէյրութ:

Այս ուրախ առիթով, «ԱՐԱՐԱՏ» ջերմօրէն կը շնոր-
հաւորէ պսակուած զոյգը եւ անոնց ընտանեկան
պարագաները:

ԽՆԴԱԿՅՈՒԹԻՒՆ

Ս.Գ.Գ.Կ.Ի Վարիչ մարմնի անդամ եւ Հ.Ս.Մ.Ի դիւա-
նապետ՝ **ընկեր Լուսֆիկ Կօտալազեանի** ընդ Հ.Ս.Մ.Ի
վարչական անդամուհի՝ **ընկ.հի Մարի-Անն Յովհաննէ-
սեանի** պսակադրութեան ուրախ առիթով, Հ.Ս.Մ. Պէյրու-
թի վարչութիւնը ջերմօրէն կը շնորհաւորէ պսակել
զոյգը եւ անոնց ընտանեկան պարագաները:

Հ.Ս.Մ.Ի դիւանապետ՝ **ընկեր Լուսֆիկ Կօտալազ-
եանի** ընդ Հ.Ս.Մ.Ի վարչական անդամուհի՝ **ընկ.հի Մարի-
Անն Յովհաննէսեանի** պսակադրութեան ուրախ առիթով,
Հ.Ս.Մ. Պէյրութի Սկզբնական խորհուրդն ու
խմբապետական կազմը իրենց խնդակցութիւնը կը
յայտնեն պսակուող զոյգին եւ անոնց ընտանեկան
պարագաներուն:

ԱՆԵՔՍԱՆԴԻ ԹՕՓՃԵԱՆԻ ԳՐԱԿԱՆ ՎԱԻԵՐԱԳՐՈՒԹԻՒՆԸ...

Շարունակուած էջ 3-Էն

պլացքի հրճուանքից եր գուցե եւ ոչ թէ ոճրագործի դաշոյնից,
որ մինչեւ կործ մխրճեց սիրտը...» (էջ 589):
15 Հոկտեմբեր 1915-ին Ռուբէն Սեւակի կինը՝ Եաննի իր
երկու զաւակներուն եւ մօրը հետ կը մեկնի Չուիցերիա,
վերջնականապէս թողելով այն երկիրը, որ գերեզման դար-
ծաւ ողջ հայ ժողովուրդին...:
Պատումի պերճախօսութիւնն ու մանրամասնութեանց
ճշգրտութիւնը այն տպաւորութիւնը կը ձգէ, թէ հեղինակը՝
Ալեքսանդր Թօփճեան այնքան մանրամասն ուսումնասիրած
է Ռուբէն Սեւակի կեանքին ընդմէջէն իր մշակած կիւթը, որ
թէեւ գրական ձեւով ներկայացնելով, կարծեք ականատես
վկայ մը եղած ըլլար Յայասպանութեան:

ԻՏԱԿԻՄ ՀԻՆ ԸՆԿԵՐ ՄԸ...

Շարունակուած էջ 3-Էն

Անշուշտ շատ ապրուած պահեր կան, որոնք դժուար է
արտայայտել բառերով:
Իտալիան ինձի համար հին ընկեր է...:
Արդէն վերադարձած եմ տունս՝ Յայաստան, բայց խոհե-
րուս մէկ մասը դեռ կը թափառի ֆլորէնթական հրապարակ-
ներուն վրայ, կ'անցնի վենետիկեան կամուրջներէն կամ լուռ
կը կենայ մեծ ջրանցքին դիմաց...
Սակայն այս բոլորին կողքին կայ նաեւ ուրիշ Իտալիա մը՝
հայկական Իտալիան: Այս անգամ չանդրադարձանք Սուրբ
Մինասի տաճարին, որ բարձունքի վրայ անխռով կեցած
Ֆլորանսին անդրորութիւնը կը հսկէ կարծես, կամ Սուրբ
Ղազար կղզիին, ուր հայ մշակույթն ու գիտութիւնը նոր շունչ
առին Մխիթարեան հայրերուն շնորհիւ: Անոնք եւս Իտալիոյ
հոգիին մէկ մասն են, արժանի առանձին անդրադարձի:
Յետեւաբար, այս ճամբորդութիւնը աւարտած չէ, այլ կանգ
կ'առնէ կարճ ժամանակով:
Մնացեալը՝ ուրիշ անգամ:

ARARAD DAILY NEWSPAPER

Tel.-Fax: 01-565599 | P.O.Box: 175275 Mar Mikhael
Beirut | Lebanon | www.araraddaily.com
email: araradoratert@gmail.com

ارارات جريدة يومية عربية
تصدر عن شركة ماسيسر للمباعة والنشر (ش.م.م.)